512 «Ո՜վ դուք ծարավներ, եկե՛ք ջրի մոտ,

1. «Ո՜վ դուք ծարավներ, եկե՛ք ջրի մոտ,
Դուք, որ փող չունեք, եկեք ու առեք
Առանց վճարի, հանց գինի ու կաթ,
Ինձանից խնդրեք, բարիք ստացեք:
Ջուր պիտի թափեմ ծարավի վրա,
Ինչպես անձրևը՝ չորության վրա,
Հոգիս պիտ թափեմ ամենքի վրա,
Իմ օրհնությունը՝ սերունդիդ վրա:

Ծ, ալելուիա՛, (4)
Հոգիս պիտ թափեմ ամենքի վրա,
Իմ օրհնությունը՝ սերունդիդ վրա»:

2. Սա Հովելի մարգարեությունն է,
Որ այս օրերում այն կատարվում է,
Եվ Երեմիային տված խոստումն է՝
Նոր ուխտի խոսքը, որ հաստատվում է:
Տաճարում կանգնած՝ Տերն աղաղակեց.
«Նա, ով ծարավ է, թող որ Ինձ մոտ գա,
Ինձ հավատացողից, ինչպես որ գրվեց,
Կենդանի ջրի աղբյուր կբխի»: